Գրկեցի գրքը
հուզոտ ընկալմամբ

Bookmark

Наринэ Абгарян

С неба упали три яблока

РОМАН

Bookmark

Նարինե Աբգարյան

Երկնքից երեք խնձոր ընկավ

ՎԵՊ

Թարգմանությունը ռուսերենից՝
Նաիրա Խաչատրյանի

ԵՐԵՎԱՆ
2020

Bookmark

ԵՐԵՎԱՆ
ՕՐԱԿՈՒԼ
2017
ՀՏԴ 821.161.1-31Աբգարյան
ԳՄԴ 84(2Ռ)-44
Ա 128

Ա 128 Աբգարյան Ն.
Երկնքից երեք խնձոր ընկավ / Նարինե Աբգարյան;
Թարգմ. ռուսերենից՝ Նաիրա Խաչատրյանի. – Եր.: «Օրակուլ» ՍՊԸ,
2020.– 272 էջ:

Հայկական մի փոքրիկ լեռնային գյուղի բնակիչների գլխին ինչ ասես չի գալիս՝ երաշտ, սով, նույնիսկ երկրաշարժ: 58-ամյա Անատոլիան՝ գյուղի 50 բնակիչներից ամենաերիտասարդը, մի օր արթնանում է արնահոսությամբ: Երբ պարզում է, որ արգանդի արնահոսությունից չի մեռնում, ընդունում է գյուղի դարբնի ամուսնության առաջարկը: Այրին, որ առանց զավակի ապրել էր առաջին դաժան ամուսնությունը, պետք է որոշի կյանքը շարունակե՞լ Վասիլի հետ, թե՞ ոչ:

Վիշտը, հավատալիքներն ու սովորույթներն Աբգարյանը ներկայացնում է լեռնային գյուղի կախարդական մանրամասներով՝ ցույց տալով իր իշխանությունը կերպարների նկատմամբ («մառանցիները ռացիոնալ սնահավատ մարդիկ էին, որոնք, այնուամենայնիվ, հավատում էին երազներին ու նշաններին»):

ՀՏԴ 821.161.1-31 Աբգարյան
ԳՄԴ 84(2Ռ)-44

Գրքի հայերեն հրատարակությանն աջակցել է Արթուր Ջանիբեկյանը:

Գրքի գլխավոր հովանավոր
«Վերածնունդ» մշակութային
և ինտելեկտուալ հիմնադրամ
www.rf.am

ISBN 978-9939-9117-4-8
Նարինե Աբգարյան «Երկնքից երեք խնձոր ընկավ» © 2020, «Նյու Մեգ» ՍՊԸ
С неба упали три яблока © 2014, Наринэ Абгарян
Շապիկի լուսանկարը՝ Debra Lill / Trevillion Images
Հեղինակի լուսանկարը՝ անձնական արխիվից

Այս գրքի հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են «Օրակուլ» ՍՊԸ-ին:
Համաձայն կնքված պայմանագրի՝ հրատարակչության գրքերը ներկայացված են որպես «Նյու Մեգ» ընկերության «Օրակուլ» հայ-ռուսական մատենաշար:

Բովանդակություն

Մաս I

ՆՐԱՆ, ՈՎ ՏԵՍԵԼ Է 7

Գլուխ 1 9

Գլուխ 2 49

Գլուխ 3 73

Գլուխ 4 87

Գլուխ 5 115

Մաս II

ՆՐԱՆ, ՈՎ ՊԱՏՄԵԼ Է 129

Գլուխ 1 131

Գլուխ 2 147

Գլուխ 3 159

Գլուխ 4 167

Գլուխ 5 177

Գլուխ 6 183

Գլուխ 7 199

Մաս III

ՆՐԱՆ, ՈՎ ԼՍԵԼ Է 213

Գլուխ 1 215

Գլուխ 2 239

Գլուխ 3 257

Եզրափակիչ գլուխ 265

Bookmark

Մաս I

ՆՐԱՆ, ՈՎ ՏԵՍԵԼ Է

Bookmark

Գլուխ 1

Ուրբաթ, ճաշից հետո, երբ արևը, անցնելով բարձր զենիթը, հանդիսավոր գլորվեց հովտի արևմտյան կողմը, Սևոյանց Անատոլիան պառկեց մեռնելու:

Մինչև էն աշխարհի ճամփան բռնելը նա տեղը տեղին ջրել էր բոստանն ու հավերին կեր լցրել սովորականից շատ. ինչ իմանա՝ հարևանները ե՞րբ կգտնեն իր անշունչ մարմինը, թռչունը հո անկուտ չի՞ մնալու: Հետո բացել էր անձրևաջրերի համար ջրհորդանների տակ դրած տակառների կափարիչները, որ անսպասելի անձրևից տանիքից թափվող ջրի շիթերը տան հիմքը չլվանան-տանեն: Հետո խոհանոցի դարակներն էր տնտղել, հավաքել ուտելիքի կիսատ մնացած պաշարները՝ կարագով, մեղրով ու պանրով ամաններ-ը, հացի կտորը և խաշած կես հավը, ու տարել զով մառան: Հանել էր շիֆոներից վերջին հանգրվանի հանդերձանքի կապոցը՝ սպիտակ ժանեկագործ օձիքով բրդյա փակ շորը,

հարթ գործվածքից կարված, գրպաններով երկար գոգնոցը, տափակ ներբաններով կոշիկները, գործած գուլպանները (ամբողջ կյանքում ոտքերը սառել են), մաքուր լվացած ու արդուկած ներքնազգեստն ու նաև ատուտատի թազբեհն արծաթյա խաչով. Յասամանը հաստատ գլխի կընկնի այն ձեռքի մեջ դնել:

Հագուստը հյուրասենյակի ամենաերևացող տեղում էր դրել՝ ծանր, քաթանե ծածկոցով կաղնե սեղանի վրա (եթե ծածկոցը բարձրացնեն, կտեսնեն կացնի հարվածի՝ երկու խոր, լավ երևացող հետքերը): Վերջին հանգրվանի հանդերձանքի կապոցի վրա դրել էր փողով ծրարը թաղման ծախսի համար, կոմոդից հանել էր հին, մոմլաթե սփռոցն ու գնացել ննջասենյակ: Այնտեղ բացել էր անկողինը, երկու կես արել մոմլաթե կտորը, մի կեսը փռել սավանի վրա, երկրորդ կեսով ծածկվել էր, վրան գցել ծածկոցը, ձեռքերը կրծքին ծալել, ծոծրակը հարմարավետ տեղավորել բարձին, խոր շունչ քաշել ու փակել աչքերը: Հետո անմիջապես վեր էր կացել, պատուհանի երկու փեղկերը մինչև վերջ բացել, խորդենու ծաղկամաններն արանքը դրել, որ չփակվեն, ու նորից պառկել: Հիմա կարելի էր չանհանգստանալ, որ մահկանացու մարմինը լքած հոգին մոլորվածի պես կթափառի սենյակում և ազատվելուն պես դուրս կթռչի պատուհանից երկինքն ի վեր:

Այդքան մանրամասն ու մանրակրկիտ պատրաստությունները բավական տխուր և էական հիմքեր ունեին. արդեն երկրորդ օրն էր, ինչ Սևոյանց Անատոլիան արնահոսում էր: Հայտնաբերելով ներքնազգեստի վրա անհասկանալի մուգ հետքեր՝ նախ քար էր կտրել, հետո ուշադիր զննել էր դրանք և, համոզվելով, որ իսկապես արյան հետքեր են, դառը լաց էր

եղել: Սակայն, ամաչելով իր վախից, իրեն սաստել էր և գլխաշորի ծայրով սրբել արցունքները: Ի՞նչ իմաստ ունի լացը, եթե դա է իրականությունը: Ամեն մեկն իր մահն ունի. մեկի սիրտն է անջատում մահը, մյուսի խելքն է տանում ծաղրելով, իսկ իրեն, ստացվում է, տրված է արնաքամ լինելը:

Հիվանդության արագընթացությանն ու անբուժելիությանն Անատոլիան չէր կասկածում: Իզուր չէր, որ այն խոցել էր մարմնի ամենաանպետք ու ամենաանիմաստ մասը՝ արգանդը: Ասես հաստատում էր, որ սա վերահաս պատիժն է, որ չի կարողացել կատարել իր գլխավոր պարտքը՝ երեխա բերելը:

Ինքն իրեն արգելելով լաց լինել ու դժգոհել, ինչը հավասար էր անխուսափելիին հարմարվելուն, Անատոլիան զարմանալիորեն արագ հանգստացավ: Սպիտակեղենի սնդուկը քանդրտելուց հետո գտավ-հանեց հին սավանը, պատռելով մի քանի մասի բաժանեց, տակդիրի նման բաներ սարքեց: Բայց երեկոյան արյունն այնքան ուժեղացավ, որ թվաց, թե ինչ-որ տեղ՝ ներսում, մեծ ու անսպառ երակ է պայթել: Ստիպված գործի դրեց տանը եղած բամբակի ոչ շատ մեծ պաշարը: Քանի որ բամբակը սպառնում էր արագ վերջանալ, Անատոլիան քանդեց վերմակի եզրը, դուրս քաշեց բրդի մի քանի փունջ, լավ լվաց ու փռեց պատուհանագոգին չորանալու: Իհարկե, կարելի էր գնալ հարևան Շլապկանց Յասամանի մոտ ու բամբակ խնդրել, բայց Անատոլիան դա չարեց, որովհետև վախեցավ, որ հանկարծ իրեն չի զսպի, լաց կլինի ու կպատմի ընկերուհուն իր մահացու հիվանդության մասին: Յասամանն էլ անմիջապես կխառնվի իրար, կվազի Սաթենիկի մոտ, որ շտապօգնության մեքենա կանչելու կայծակ հեռագիր ուղարկի հովիտ... Անատոլիան չէր պատրաստվում մի

բժշկից մյուսի մոտ վազել, որ նրանք էլ տանջեին իրեն անիմաստ ու անօգուտ գործողություններով: Որոշել էր մահանալ՝ արժանապատվությունն ու հանգստությունը պահպանած, լռության ու խաղաղության մեջ, տան պատերի ներսում, որտեղ անցկացրել էր իր դժվար ու բարդ կյանքը:

Ուշ պառկեց, երկար ժամանակ թերթում էր ընտանեկան ալբոմը. հանգուցյալ հարազատների դեմքերը նավթավառի թույլ լույսի տակ ավելի թախծոտ ու մտահոգ էին թվում: «Շուտով կտեսնվենք,- շշնջում էր Անատոլիան՝ գյուղի ծանր աշխատանքից կոշտացած մատներով շոյելով յուրաքանչյուր լուսանկարը,- շուտով կտեսնվենք»: Չնայած տագնապալի ու ճնշված վիճակին՝ հեշտ քուն մտավ ու քնեց մինչև լույս: Արթնացավ աքլորի անհանգիստ կանչից: Թռչունները հավանոցում իրար էին անցել՝ անհամբեր սպասելով, թե երբ են դուրս թողնելու, որ մարգերով ման գան: Անատոլիան լարեց ուշադրությունը՝ իր վիճակը հասկանալու համար: Ինքնազգացողությունը գնահատեց միանգամայն տանելի: Եթե չհաշվենք գոտկատեղի նվվացող ցավն ու թեթև գլխապտույտը, առանձնապես ոչինչ չէր անհանգստացնում: Զգույշ վեր կացավ, զուգարան գնաց, ինչ-որ մի չար բավարարվածությամբ համոզվեց, որ արնահոսությունն ավելի է ուժեղացել: Վերադարձավ տուն, բրդի փնջից ու կտորից տակդիր սարքեց: Եթե այսպես շարունակվի, մինչև առավոտ ամբողջ արյունն իրենից դուրս կհոսի: Ուրեմն ևս մի մայրամուտ իր կյանքում ուղղակի կարող է այլևս չլինել:

Կանգնեց ծածկապատշգամբում՝ յուրաքանչյուր բջիջով ներծծելով առավոտվա նուրբ լույսը: Գնաց հարևանուհու մոտ՝ բարևելու և իմանալու՝ ինչ կա-չկա: Ցասմանը մեծ

լվացքի էր պատրաստվում. հենց այդ պահին փայտի վառարանին մեծ տաշտով ջուր էր դնում: Մինչ ջուրը կտաքանար, նրանք դեսից-դենից խոսեցին, կենցաղային գործեր քննարկեցին. շուտով թութը կհասնի, պետք է թափ տալ, պտուղները հավաքել, մի մասից օշարակ եփել, մյուս մասը չորացնել, իսկ երրորդը փայտե տակառի մեջ լցնել, որ երբ հասնի, թթի օղի քաշեն: Ավելուկի հետևից էլ արդեն պետք է գնալ. մեկ-երկու շաբաթից ուշ կլինի, հունիսյան շոգ արևի տակ խոտն արագ է դախանում ու սննդի համար անպիտան դառնում: Անատոլիան հեռացավ Յասամանի մոտից, երբ տաշտի ջուրը եռաց: Հիմա կարելի էր չանհանգստանալ: Յասամանը մինչև մյուս առավոտ իր մասին չի հիշի: Մինչև լվանա, օսլայի, լեղակի, փռի արևին չորանալու, հավաքի, արդուկի, ուշ երեկոյան միայն կվերջացնի: Այնպես որ, Անատոլիան բավական ժամանակ ունի հանգիստ էն աշխարհ գնալու:

Այդ հանգամանքով բավարարված՝ առավոտն անցկացրեց առօրյա անշտապ հոգսերով և միայն կեսօրից հետո, երբ արևը, անցնելով երկնքի գմբեթը, հանդիսավորապես գլորվեց հովտի արևմտյան կողմը, պառկեց մեռնելու:

Անատոլիան Սևոյանց Կապիտոնի երեք աղջիկներից փոքրն էր ու միակը նրա ամբողջ ընտանիքից, որին հաջողվել էր ապրել բավական երկար. փետրվարին տոնել էր 58-ամյակը:

Մորը լավ չէր հիշում: Նա մահացել էր, երբ ինքը 7 տարեկան էր: Մոր նշաձև աչքերն անհավանական ոսկե երանգ ունեին, իսկ մազերը խիտ էին ու մեղրագույն: Անունն էլ՝ արտաքինին համահունչ՝ Ոսկե: Մայրը ձիգ հյուսում էր հրաշալի մազերը, փայտե հերակալով հավաքում հյուսքը ծոծրակի վրա մեծ կապով և քայլում գլուխը հետ գցած: Հաճախ, մատները վզի

վրայով տանելով, բողոքում էր, թե վիզը թմրում է: Տարին մի անգամ հայրը նստեցնում էր պատուհանի մոտ, խնամքով սանրում մազերը և զգուշությամբ կարճացնում մինչև գոտկատեղ. մայրը թույլ չէր տալիս ավելի կարճ կտրել: Աղջիկների հյուսքերն էլ երբեք չէր կտրում. երկար մազերը պետք է պաշտպանեին անեծքից, որը թևածում էր նրանց գլխավերևում արդեն 18 տարի, այն օրից ի վեր, ինչ ամուսնացել էր Սևոյանց Կապիտոնի հետ:

Իրականում Կապիտոնի հետ պետք է նրա ավագ քույրն ամուսնանար: Տաթևիկն այն ժամանակ 16 տարեկան էր, իսկ 14-ամյա Ոսկեն՝ Ագուլիսանց Գարեգինի մեծ ընտանիքի երկրորդ մարդացու դուստրը, ամենագործուն մասնակցությունն ուներ հանդիսության նախապատրաստության գործում: Համաձայն դարավոր ավանդույթի, որը մառանցիները սերնդեսերունդ պահպանում էին, պսակադրության արարողությունից հետո հարսանիքը պետք է սկզբում հարսի տանն անեին, հետո՝ փեսայի: Բայց Կապիտոնի և Տաթևիկի ընտանիքների՝ Մառանի երկու հարգված ու հարուստ գերդաստանների մեծերը որոշեցին միավորվել և մեկ մեծ հարսանիք անել մեյդանում: Հանդիսությունն իր թափով խոստանում էր լինել չտեսնված: Մեծաթիվ հյուրերի երևակայությունը շանթահարելու նպատակով Կապիտոնի հայրն իր երկու փեսաներին ուղարկել էր հովիտ, որ կամերային թատրոնի երաժիշտներին հրավիրեին հարսանիքին նվագելու: Նրանք վերադարձել էին հոգնած, բայց գոհ, ու հայտարարել էին, որ մեծամիտ երաժիշտները (ո՞վ է տեսել, որ թատերական նվագախմբին հրավիրեն գյուղ) զայրույթը փոխել էին ողորմածության, երբ իմացել էին յուրաքանչյուրին երկու ոսկեդրամ շռայլ վար-

ձատրության և շաբաթվա մթերքի պաշարի մասին, որ Կապիտոնի փեսաները խոստացել էին սայլով թատրոն հասցնել հարսանիքից հետո:

Տաթևիկի հայրն էլ էր անակնկալ պատրաստել. հարսանիքի հյուրը պետք է լիներ հովտի ամենահայտնի երազներ մեկնողը: Տասը ոսկեդրամ պարգևի դիմաց նա համաձայնել էր ամբողջ օրն իր արհեստով զբաղվել: Միայն խնդրել էր օգնել գործի համար անհրաժեշտ սարքերը տեղ հասցնել՝ վրանը, ապակյա գունդը մեծ պատվանդանի վրա, գուշակությունների սեղանը, լայն թախտը, անհայտ տեսակի, թանձրաբույր, լայնատարած բույսով երկու ծաղկաման և գալարաձև հազվադեպ մոմեր՝ պատրաստված հատուկ տեսակի փայտի աղացած փոշուց, որոնք ամիսներով վառվում էին՝ շուրջը տարածելով կոճապղպեղի ու մուշկի բույր, և չէին վերջանում: Մառանցիներից բացի հարսանիք էր հրավիրված հովտի՝ մեծ մասամբ հարգված և ունևոր 50 մարդ: Սպասվող տոնակատարության մասին, որը խոստանում էր դառնալ առնվազն հիշարժան իրադարձություն, անգամ թերթերում գրեցին, և դա հատկապես հարգանքի էր արժանի, քանի որ մինչև այդ մամուլը ոչ մի անգամ չէր հիշատակել ազնվական ծագում չունեցող ընտանիքների հանդիսությունների մասին:

Սակայն տեղի ունեցավ այն, ինչը ոչ ոք չէր կարող ենթադրել. պսակադրությունից չորս օր առաջ հարսնացուն տենդով անկողին ընկավ, մի օր տանջվեց դողէրոցքով և ուշքի չգալով մահացավ:

Թաղման օրը Մառանի վրա, ըստ երևույթին, բացվեցին ինչոր մութ դարպասներ և դուրս թողեցին ուրիշ՝ երկնայինին հակառակ ուժեր, որովհետև երկու ընտանիքների գլխավորների